



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15 մարտի 2016 թվականի N 6 - Ա

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի զեկուցագիրը և հաշվի առնելով Հարություն Ալավերդյանի բացատրությունը՝

կարգադրում եմ.

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար «ՀՀ Տավուշի մարզի Ոսկեսարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հարություն Ալավերդյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:
2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:



Հ. ԱՐՈՎՅԱՆ